ռօնեաններէն «Հրամաններն ու ձեռնարկները»: Դեռ ևս յունուար ամսին Հայաստանի կառավարութեան կողմէ բողոքել էր Ադրբէջանի կառավարութեան առաջ Զանգեզուրը և Հայկական Ղարաբաղը Ադրբէջանի կողմէ նշանակուած ընդհանուր նահանգապետութեան սահմաններէն մէջ յայտարարելու դէմ: Բրիտանական հրամանատարութեան ուղղած մի քանի գրութիւններով Հայաստանի կառավարութեան կողմէ ես պատիւ եմ ունեցել յայտարարել, որ թէ տեղական բնակչութիւնը և թէ մեր կառավարութիւնը չեն կարող հաշտուել, որ Զանգեզուրն ու Հայկական Ղարաբաղը ենթարկուեն Ադրբէջանի կառավարութեան կողմէ կարգուած իշխանութեան, բայց յօժարութեամբ խնդրում են, որ բրիտանական հրամանատարութիւնը գործադրէ իր հեղինակաւոր և հաշտարար միջամտութիւնն ու ազդեցութիւնը այդ չրջանում: Հայաստանի կառավարութեան յատուկ յանձնարարութեամբ պարտք ունեմ հաղորդելու ձերդ գերազանցութեան, որ մեր կառավարութիւնը մնում է նոյն կարծիքին և հայեցակէտին»:

Միաժամանակ Հայաստանի կառավարութիւնը, անգլիական բարձր հրամանատարութեան հաւանութեամբ, Շուչի ուղարկեց ներկայացուցիչ Մ. Արզումանեանին: Մաք Մեկենը սրան էլ առաջարկեց յայտարարել, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը ենթարկւում են Ադրբէջանին: Մերժելով՝ Արզումանեանն ևս արժանացաւ Բալայեանի ու Զարաֆեանի բախտին. արտաքսուեց Ղարաբաղից: Ղարաբաղից հեռացուեց նաև Ազգ. Խորհրդի նախագահ Ալան Շահնազարեանը:

Այս բոլոր անյաջող փորձերից յետոյ գնդ. Շատելվորթը, ապրիլի վերջերին, մեկնեց Ղարաբաղ՝ անձամբ պարտադրելու ադրբէջանեան իշխանութիւնը: Այդ առթիւ, ապր. 23–ին, Շուչիում, գումարուեց Ղարաբաղի հինգերորդ համագումարը, որի առաջին նիստում Շատելվորթն ու դր. Սուլթանովը աշխատեցին համոզել ժողովականներին՝ ենթարկուել Ադրբէջանին: Համագումարի պատգամաւորները բուռն ցասումով բողոքեցին ու մերժեցին համակերպուել Շատելվորթ—Սուլթանովի պահանջներին: Համագումարը միաձայն ընդունեց հետևեալ բանաձևը.

«Ղարաբաղի հայութեան 5րդ համագումարը, 1919թ. ապր. 23–ին (ն. տ.) իւր անպաշտօն նիստում լսելով անգլիական հրամանատարութեան ներկայացուցիչ գեներալ Շատելվորթի Ղարաբաղի ժամանակաւոր իշխանութեան վարչական ծրագիրը և քննելով նոյն համագումարի ապր. 24–ի պաշտօնական նիստում՝ որոշեց.

1. Միանգամայն կողմնակից և ծարաւի լինելով կարգի և խաղաղութեան վերահաստատմանը Ղարաբաղում.

2. Բոլոր ցանկութեամբ և անկեղծութեամբ ընդառաջ գնալով անգլիական հրամանատարութեան առաջարկին՝ խաղաղ բարեկամական յարաբերութիւններ պահպանել հարևան թուրք ժողովրդի հետ, որը մինչ այժմ էլ իրագործել է Ղարաբաղի հայութիւնը.

3. Ի նկատի առնելով, որ Ղարաբաղի վերաբերեալ տերիտորիալ և սահմանային հարցերը սկզբից է վերջնական լուծում ստանան Խաղաղարար կոնֆերանսում, ինչպէս և՝ ինքը գեն. Շատելվորթը յայտարարեց այդ մասին, Ղարաբաղի հայութեան 5րդ համագումարը գտնում է, որ այդ ծրագիրը չի համապատասխանում համագումարին պատգամաւորներ ուղարկող